կապակցութեամբ, եւ այդ ժամանակի լրանալը ազատ չի կացուցանեց հովուին
եւ պէտք է շարունակէ իր պաշտօնը նոյն համայնքին մէջ

Չեր այս, ինչպէս նաեւ անձամբ ալ ներկայացուցած խնդրանքը,
պաշտօնի փոփոխութեան մասին, նկատի ունինք, սակայն Հնարաւորութիւն
չունինք ներկայիս ընթացք տալու, վասնզի այդ կախում ունի հանգամանք-
ներէն, այն որ, նախ եթէ յարմար բաց համայնք մը ունենանք, եւ երկրորդ,
Չեզ փոխարինող հովիւ մը Չեր ներկայի պաշտօնին համար, որովհետեւ
մեր կարեւոր շրջաններէն մին ինչպիսին է Չեր շրջանը, չենք կարող
առանց հովուի թողուլ, ապա ուրեմն պէտք է համբերել մինչեւ կարելի
ըլլայ պատշաճ կարգադրութիւն մը ընել


Ինչ կը վերաբերի երիցուհուն գործողութեան ենթարկուելու եւ
Չեր իր մօտ գտնուելու անհրաժեշտութեան, կը թոյլատրենք որ, Արժ. Տ.
Քարեգին Բաշանյի հետ կարգադրութիւն ընէք Չեզ փոխարինելու եւ Դուք
որոշ ժամանակով, բացակայէք Չեր պաշտօնէն եւ լինիք երիցուհու մօտ
իր գործողութեան ենթարկուելու շրջանին

Հայրական սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթաբար
Գ. Ա.
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

**Հայ Առաքելական
Ս. Մեսրոպ Աղեղեցի**

1326 Սթէյթ Սթրիթ
ՐէՅՍԻՆ, ՎՐՍ.

ԽՈՐԷՆ ՔՀՆՅ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Հովիւ
1231 State St.



**Armenian Apostolic
St. Mesrob Church**

1326 State Street
RACINE, WIS.

REV. KOREN MAMIGONIAN, Pastor
Telephone

ՐԵՅՍԻՆ, 1943 Մարտ 16

Handwritten signature/initials

Գերաշնորհ

**Տ, Գարեգին Ս, Արքեպիս, Յովսէփեան
Առաջնորդ Ամերիկահայոց**

Գեր, Սրբազան Հայր,

Երիցուհիս—Մովինարի վերաբուժական գործողութեան ենթարկուելը յետաձգեցի, թերեւս այդպիսով պատճառ դառնալով աւելի բարդութիւններու, այն մտածումով, թէ ներկայ թեմիս մէջ պաշտօնավարութեանս ժամանակաշրջանը կը լրանայ յառաջիկայ Մայիսի 15 ին, որմէ վերջ ալ եւս ազատ կըլլամ զինքը այդ գործողութեան յանձնելու եւ իր քովն ըլլալու իր կազդուրման ամբողջ ժամանակամիջոցը, որ թերեւս աւելի երկար տեւէ քան ակնկալութիւնը:

Սոյն պարագան Ձեր Սրբազնութեան հայրական ուշադրութեան յանձնելով, կը խնդրեմ, որ Մայիսի կէսէն վերջ զիս ազատ կացուցանէք թեմիս պատասխանատուութենէն, կարենալ օր առաջ ձեռնարկելու հիւանդ կնոջս ազատման այդ գործին, որ իմ համար խիստ կարեւոր է: Համբուրիւ Ս, Աջոյն Տեառնդ

Handwritten signature: Խորեհրդ Գրիգորեան

Յուլուար 20, 1948

Արժանաշնորհ
Տ. Խորենի ԲՀՆԿ. Մամիկոնեան
Հոգեւոր հովիւ Ռէյսինի թեմին,

Ստացած ենք ամսոյս 19 թուակիր Ձեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ, Ձեր նախագահութեան ներքեւ տեղի ունեցած են Ռէյսինի թեմի հոգաբարձական նոր ընտրութիւնները, եւ ներկայացընելով նորընտիր կազմը, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Կատարուած ընտրութիւնները գտնելով համաձայն Սահմանադրութեան օրինաց, այսու կը վաւերացնենք հետեւեալ կարգով:

Տեարք	Հանի Թախթախեան	Ա. Ատենապետ
	Գրիգոր Չալրզեան	Բ. Ատենապետ
	Յովհաննէս Գաճազէյիշեան	Ա. Ատենաղպիր
	Միհրան Տէտէեան	Բ. Ատենաղպիր
	Արսէն Լեւոնեան	Պանձապահ
	Սարգիս Գրիգորեան	Դպրահրական
	Միհրան Զորտիկեան	Խորհրդական

Կօրհնենք նորընտիր հոգաբարձութեան կազմը, եւ կը մաղթենք որ փոխադարձ սիրով եւ գործակցութեամբ բոլորեն արդիւնաւոր գործունէութեան շրջան մը ի փառս Հայաստանեայց Կեդեցւոյ եւ յօգուտ Ռէյսինի մեր պատօճական համայնքին:


Հայրական սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Հայ Առաքելական
Ս. Մեսրոպ Եկեղեցի

1326 ՍԹԵՅԹ ՍԹՐԻԹ
ԲԷՅՍԻՆ, ՎԻՍ.

ԽՈՐԷՆ ԲՀՆՅ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ՉԿԻՆ
1231 State St



Armenian Apostolic
St. Mesrob Church

1326 State Street
RACINE, WIS.

REV. KOREN MAMIGONIAN, Pastor
Telephone

18 June 1943

Handwritten signature/initials

Ս. Գրիգոր Ա. Ապր. Գրիգորյան
Առաքելական Եկեղեցու

Գր. Արքեպիսկոպոս Գևորգյան

Քաղաքի Արքեպիսկոպոս Գևորգյան, Բեյ. Սթ. 1326 հասցեում
Գրեցաքանակներ և արքեպիսկոպոսական թղթեր
Գրեցաքանակներ, արքեպիսկոպոսական և Գրեցաքանակներ
Գրեցաքանակներ, Արքեպիսկոպոսական

- Գրեցաքանակներ Ե. Արքեպիսկոպոս
- Գրեցաքանակներ Բ. " "
- Գրեցաքանակներ Ե. Արքեպիսկոպոս
- Գրեցաքանակներ Բ. " "
- Գրեցաքանակներ Գրեցաքանակներ
- Գրեցաքանակներ Գրեցաքանակներ
- Գրեցաքանակներ " "

Գրեցաքանակներ, Գրեցաքանակներ և Գրեցաքանակներ
Գրեցաքանակներ:

Գրեցաքանակներ Ա. Արքեպիսկոպոս
Գրեցաքանակներ Գրեցաքանակներ

Summary to Whelan re fact for Bureau re last to find and
 unperfected assignment with Bureau in a fact
 that it is: search with the assignment to Court
 rights to take title with the simple assignment to
 Bureau, and upon assignment this Bureau will
 to find the fact that assignment is not a fact of the
 the fact that the assignment is not a fact of the
 to the Bureau Bureau Bureau Bureau Bureau
 to find the fact that assignment is not a fact of the
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau

2 - fact assignment in U.S. Court to find the fact that
 assignment with the fact that the assignment is not a fact of the
 to find the fact that assignment is not a fact of the
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau

3 - fact assignment in U.S. Court to find the fact that
 assignment with the fact that the assignment is not a fact of the
 to find the fact that assignment is not a fact of the
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau

4 - fact assignment in U.S. Court to find the fact that
 assignment with the fact that the assignment is not a fact of the
 to find the fact that assignment is not a fact of the
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau

When seen by the Bureau
 Bureau Bureau Bureau Bureau Bureau Bureau

REV. SOUKIAS A. KALFAYAN
RECTOR OF ARMENIAN CHURCHES IN WISCONSIN
P. O. Box 334 South Milwaukee, Wis.
Phones: 413-JL 334 or 765



REV. SOUKIAS A. KALFAYAN
PASTOR OF ARMENIAN CHURCHES
RACINE, SO. MILWAUKEE & WEST ALLIS
PHONES: PROSPECT 360 OR 749 OR 640

OFFICE 1326 STATE ST.

RACINE, WIS

Aug 8, 1945
U. S. C. O. H.
E. E. C. O. S.

Mr. S. S. Spivey
Rustland
U. S. C. O. H.

Handwritten notes:
Mr. S. S. Spivey
Rustland
U. S. C. O. H.

1. - [Illegible handwritten text]
2. - [Illegible handwritten text]
3. - [Illegible handwritten text]

... 450 00 ... 30 ...
 ... 30 ...
 ...
 ...
 ...
 ...
 ...
 ...
 ...
 ...
 ...

4- ...
 ...
 ...

5- ...
 ...
 ...
 ...
 ...

6- ...
 ...
 ...

7- ...
 ...
 ...
 ...

...
 ...
 ...
 ...

REV. SOUKIAS A. KALFAYAN
 RECTOR OF ARMENIAN CHURCHES IN WISCONSIN
 P. O. Box 334, South Milwaukee, Wis.
 Phones: 413-JY 382-J or 745

Ապրիլ 22, 1946

Մեծայարգ
Տիար Տիգրան Ճինկեղեան
Ատենապետ պատ. հոգաբարձուի թեան
Բէյսիկի համայնքին.

Անցեալ տարուայ Մարտի շրջանին կատարուած Ս. Էլմիածնի Դարպասի
հանգանակութեան առթիւ, Ձեզի ուղարկուած էր տաքցականի երկու
գրքոյկներ որոնց բոլորն ալ գործածելով վերադարձուցած էիք:

Գործածուած բոլոր տաքցականներու ընդհանուր գումարն է 261 գո-
յար, որուն փոխարէն ուղարկած էիք 300 գոյար: Մեզի յայտնի չէ
թէ մնացեալ նախատուութեանց համար ինչ տաքցական գործածած էք.
Մի եւեռոյն ծամանակ, տեղեկութիւն հասած է մեզ թէ, Ս. Էլմիածնի այդ
հանգանակութեան արգիւնքը աւելի եղած է քան ինչ որ Դուք գրկած
էք Առաջնորդարան, ուստի, այսու կը հրահանգենք որ, յիշեալ հանգանա-
կութեան ժանրամասն հաշիւը եւ Ձեզ մտա մնացեալ հաշիւը փութացնէք
Առաջնորդարան, վասնզի ամէն գումար ինչ նպատակի անուանով որ կը
հանգանակուի, կը յատկացուի նոյն նպատակին, եւ կարելի չէ գործածել
անկէ գուրս նպատակի համար:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ
Մեամբ ազօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Մայիս 1, 1946

Մեծայարգ
Պր. Տիգրան ձինկեօղեան
Ատենապետ պատ. հոգաբարձութեան
Ռէյսինի համայնքին.

Ստացած ենք Ապրիլ 24 թուակիր Զեր գրութիւնը համայնքի
հովուական հարցի վերաբերութեամբ:

Այսու կը յայտնենք թէ, մինչեւ որ հնարաւոր ըլլայ Զեր
եկեղեցւոյ հովուի մասին կարգադրութիւն մը ընել, հրահանգ
տուած ենք Միգակոյի հովու Նորշ. Տ. Թահրամ Ս. Վ. Կ. նազար-
բէթեանին որ ամիսը մէկ կիրակի յատկացնէ Զեր համայնքի
ժամապաշտութեան որպէս զի քարեպաշտ ժողովուրդը բոլորովին
չգրեւի հոգեւոր միջնորդութեան:

Յանձնարարած ենք որ պատարագուցի գումարի մասին գոյացնէ
փոխադարձ համաձայնութիւն: Հանկուտ անմիջապէս հարգողովի
Հայր Սուրբին հետ, եւ ճշգիւ այցելութեանց եւ այլ մանրան-
մասնութիւնները:

Մաղթելով Զեզ կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ,

Ողջունիւ սիրոյ եւ սրհնութեամբ
Մեծաք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Մայիս 1, 1946

Հոգեշնորհ
Տ. Վահրամ Ի. Վրդ. Նազարեթեան
Հոգեւոր Հոգիւ եւ Նախագահ
պատ. Հոգաբարձութեան Միգաղայի Համայնքին,

Մեր թեմի Հոգեւորականներու զգալի պակասն ու մեծ կարիքը յայտնի է Ձեզի եւ որպէս զի կարենանք մեր անհոգի Համայնքներու Հոգեւոր կարիքներուն գէթ մասամբ բաւարարութիւն տալ, Առաջնորդարանէ կարգադրութիւն եզած է որ մեր Հոգիւները ամիսը մէկ Կիրակի յատկացնեն այցելութիւն տալու ժամադրութենէ զրկուած Համայնքի մը Այս կարգադրութիւնը կը գործադրուի Հոգիւ ունեցող մեր քիչոր եկեղեցիներուն կողմէ:

Յայտնի է Ձեզ նաեւ թէ, Ձեր շրջանին մէջ, Ռէյսիմի Համայնքը բաւական ժամանակէ ի վեր Հոգիւ չունի եւ զրկուած է Հոգեւոր միջնորդութենէ:

Ներկայիս կը յայտնենք թէ, մինչեւ որ կարենանք Ռէյսիմի Համայնքին Հոգիւի Համար կարգադրութիւն մը քնել, Առաջնորդարանի կարգադրութիւնն ու Հրահանգն է որ ամիսը մէկ Կիրակի յատկացնէք երթալու Ռէյսիմի եւ պատարագելու, Համայնքի բարեկաշտ ժողովրդեան Հոգեւոր կեանքը կենդանի պահելու Համար:

Մեր այս կարգադրութեան մասին կը գրենք նաեւ Ռէյսիմի Հոգաբարձութեան Գաղտնագրութիւնը զուամբի մասին կը յանձնարարենք որ Համալայնութիւն գոյացնէ Հոգաբարձութեան հետ:

Կը շնչանք որ կարիքի եւ անհրաժեշտութեան բերուածով կատարուած այս կարգադրութիւնը պէտք է գործադրութեան գրուի անթերի, Յնար մտորիմութիւն:

Ողջանիւ սիրոյ
Մեզն աղօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Մեծայարգ

Տիար Տիգրան Ճինկեօզեան
Ատենապետ պատ. Հոգաբարձութեան
Ռէյսինի Համայնքին,

Ձեր Դեկտեմբեր 7 թուակիր նամակը, ի մասին Ռէյսինի մեր Ս. Մեսրոպ եկեղեցւոյ Համար Հովիւի մը ընտրութեան, նկատի առինք Ազգ. Կեդր. Վարչութեան մեր վերջին նիստին մէջ, եւ այսու կը յայտնենք թէ կը վաւերացնենք կատարուած ընտրութիւնը, յայտնելով մեր ուրախութիւնը որ այսպէս բարեպատե՛հ եղանակաւ մը Ռէյսինի մեր եկեղեցին եւ բարեպաշտ ժողովուրդը դարձեալ իր հոգեւոր կեանքը յառաջ տանելու վիճակին մէջ կը մտնէ:

Ըստ այսմ կը յանձնարարենք որ Պր. Սահակ Եղանճեան Յունուար 5-էն ետք առաջին առթիւ նիւ Եորք գտնուի որպէս զի պատրաստուի իր սրբազան աշտօնին: Անշուշտ ձեռնադրութեան թուականը պիտի որոշուի յառաջիկային, նայելով Պր. Եղանճեանի յառաջդիմութեան, մեր տուրք արարողութեանց եւ Հայերէն լեզուի եւ այլ անմիջական կերպով կարեւորութիւն ունեցող նիւթերու մէջ:

Նկատի առինք նաեւ անգլիարէն օրինակը "Համաձայնագրին", զոր կ'առաջադրէիք կնքել ազգայ Հովուի եւ Ձեր միջեւ: Այս Համաձայնագիրը բաշխուի աւելորդ կը նկատենք, վասնզի Հովիւի մը եւ իր ժողովուրդին յարաբերութիւնները վաճառականական ըմբռնումով պէտք չէ ըլլան: Մեր Ամերիկայի նախագրութեան մէջ, որուն ենթակայ էք թէ Դուք, Հոգաբարձութիւնդ, եւ թէ Հովիւը եւ թէ մենք հաւատացեալ, կը պարունակէ բոլոր պայմանները եւ պարտականութիւնները Հովիւին ինչպէ՛ս նաեւ Հոգաբարձութեան: Ասկէ զատ, քահանայ մը ձեռնադրուելու ատեն Ս. Սեղանին առջեւ հանդիսաւորապէս կը խոստանայ կատարել իր բոլոր պարտականութիւնները, որուն փոխարէն եկեղեցին ալ կ'ապահովէ իր ապրուստը, ըստ առաքեցոյն թէ "Մշակն արժանի է վարձու իւրում": Հետեւաբար այդ Համաձայնագիրը չեղեալ նկատել կը յանձնարարենք Ձեզ:

Նոր տարուոյ եւ Ս. Մննդեան առթիւ կը շնորհակարտենք Ձեզ, Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ Ռէյսինի մեր բոլոր ժողովուրդը: Կը մաղթենք որ Ձեր նոր Հովիւը արժանանայ Ս. Հոգւոյն շնորհաց ձեռնադրութեամբ եւ աշխատի Տիրոջ այգւոյն մէջ, ի խթանութիւն ժողովրդեան եւ ի փառս Աստուծոյ: Ձեզ եւս կը մաղթենք կար եւ կարողութիւն եկեղեցւոյ, ազգին գործոց մէջ Ձեր անձնուէր ծառայութեանց համար:

Հայրական օրհնութեամբ
Մնամք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Gr. 4th. 12
11 Mr. 2nd
H. 12
W. 12

... ..

... ..

... ..

... ..

... ..

Raams wise,

1326 State St

July 7 - 1946

Prof. W. B. ...

Dear Sir,

I am writing to you regarding the ...

I am writing to you regarding the ...

I am writing to you regarding the ...

AGREEMENT

This agreement made and entered this 5 th day of December, 1946, by and between the Trustees of the Armenian St. Mesrop Apostolic Church of Racine, Wisconsin, hereafter to be known as the parties of the first part, and Sahag Yelandjian of South Milwaukee, Wisconsin, hereafter to be known as the party of the second part, WITNESSETH:

That the parties of the first part hereby agree to hire, retain and employ the party of the second part as the pastor of the Armenian St. Mesrop Apostolic Church of Racine, Wis for the period of five years from the date of ordainment of said second party as a pastor (Kahana) provided the party of the second part is or about to be ordained within six month from the date hereof.

That in consideration of the forgoing and for services to be rendered as pastor by the second party, the first parties agree to pay the sum of \$100.00 per month during the period preceding the ordainment, while preparing and training for qualification for ordainment as a pastor under the rules and regulations and requirements of the Armenian Church canons, but not more than the sum of \$400.00 for the training period.

That the parties of the first part agree to pay the sum of ~~\$100.00~~ \$150.00 per month from the date of ordainment until the expiration of this contract, to-wit: Five years from the date of ordainment.

That either party has to give upon the other at least six months notice before the expiration of the term if renewal of the contract is not wanted.

That the party of the second part has the right to vacation with pay for two weeks each year.

That the party of the second part agrees not to render service outside of Racine, unless by the permission of the first parties and that he has to pay to the first parties all money received for his services ~~or paid as present~~

That the second party is to pay to the first party all money ~~xxx~~ ^{except} received from all sources incidental with his office as pastor, such as for funeral service, ~~Marriage, Baptism, etc.~~, ~~etc.~~, wedding.

That the second party further agrees to act as teacher of the Armenian class in the parochial school of the church; and that he is to assign regular hours to visit sick, poor and others needing comfort etc.

And that the party of the ^{second} first part is to preside in all meetings sponsored by the church or by the church auxiliaries.

Furthermore that the ^{second} first party is to perform mass every Sunday, and on Sunday afternoons arrange lectures and other educational activities.

² In witness whereof they put their hands and seals this 5 th day of December, 1946.

Witnessed by

Toros Madaghjian
Hajj Zohrabian

TRUSTEES OF THE ST. MESROP ARMENIAN APOSTOLIC CHURCH OF RACINE

BY Leick Gengozian
President

Albert S. Ghalanian
Secretary

Harry Musuehian
Treasurer

Sahag Yelunjian

Հոկտեմբեր 30, 1946

Մեծայարգ
Պր. Թորոս Մատաղճեան
Երեսփոխան Ռէյսինի համայնքին,

Ստացանք Հոկտեմբեր 28 թուակիր Ձեր նամակը: Թէեւ մենք
կանուխէն գրեցինք Ձեզի, բայց Դուք գարձեալ կրնաք մամուլի
մասին Ձեր ունեցած եւ նախորդ նամակին մէջ մեզ յայտնած
առաջադրութիւնը գործադրել, եթէ շատ կարեւոր կը նկատէք
զայն:

Հետեւեալները պատասխաններն են Ձեր հարցումներունս—

Ա— Երեսփոխանները կրնան հոգաբարձութեան կողմէ հրաւիրուիլ
հոգաբարձութեան ժողովներուն, խորհրդակցութեան համար, բայց
քուէ չեն կրնար տալ:

Բ— Յիշեալ քահանան անգլիարէն չեմ կարծեր որ գիտնայ: Բայց
թերեւս կը սորվի: Ինք ընտանեօք պիտի գայ, իր երեցկնոջ եւ
զաւակներուն հետ միասին, բայց իր ծախքով պիտի գայ: Դուք
այդ մասին դրամական պարտաւորութիւն մը չէք ունենար:

Հայրական սիրոյ ողջունիւ
Մնամք ազօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Aug. 25-1946
1865 state of
Racine Wisc.

Josephine

Mr. Josephine's letter received.
The enclosed regarding the book of the book

W. Henry.

The enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.
It is a book of the book of the book. It is a book of the book of the book.

The enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.
It is a book of the book of the book. It is a book of the book of the book.

The enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.
It is a book of the book of the book. It is a book of the book of the book.

The enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.
It is a book of the book of the book. It is a book of the book of the book.

The enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.
It is a book of the book of the book. It is a book of the book of the book.

Enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.

The enclosed regarding the book of the book
includes 24 pages. It is a book of the book of the book.
It is a book of the book of the book. It is a book of the book of the book.

Յուլուար 6, 1947

Մեծայարգ
Տիար Տիգրան Ճինկէօզեան
Ատենայետ պատ. Հոգաբարձութեան
Րէյսինի համայնքին.

Վաւերացման համար Առաջնորդարանս ղրկած Ձեր "Րէյսինի Հայց. Եկեղեց-
ւոյ կրթական Միութեան կանոնագիր" ը նկատի առինք Ազգ. Կեդր. Վարչու-
թեան վերջին նիստին մէջ:

Այդ կանոնագիրը Առաջնորդարանիս վաւերացման շկրտտիր, որովհետեւ
տեղական միութեան մը կանոնագիր է, եկեղեցւոյ կողքին գործող եւ ենկա-
կայ տեղւոյն Հոգաբարձութեան ուստի եւ տեղական Հոգաբարձութիւնն է
որ պիտի քննէ եւ հաստատէ: Առաջնորդարանս կը հաստատէ տեղեկան ծիական
կառնքին կանոնագրութիւններ, երբ ներկայացուին:

Յիշեալ կանոնագիրը, իր ներկայ ձեւին մէջ, չհամաձայնիր նաեւ մեր թեմական
կանոնագրութեան, ուր շատ մը պարտաւորութիւններ եւ իրաւասութիւններ
տրուած է կրթական միութեան որոնք կը պատկանին Հոգաբարձութեան, ուստի
կը վերադարձնենք Ձեզ, յանձնարարելով որ Հոգաբարձութիւնդ վերամշակէ
զայն, պատշաճեցնելով մեր թեմական կանոնագրութեան եւ ապա տայ ի գործ-
ծածութիւն: Եթէ հարկ ըլլայ, կրնաք գիմել մեր Առաջնորդական Փոխանորդ
Տ. Սիոն Սրբազանին որ օգնէ Ձեզի այս խնդրին մէջ:


Ներքակ կը վերադարձնենք նաեւ չորս կտոր նամակներ զորս Հոգաբարձու-
թեանդ կը պատկանին, որ տուած էիք Տ. Սուքիաս Արեղայի գործի քննութեան
կապակցութեամբ, Զննիչ Յանձնախումբին:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ
Մնամք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

BOARD OF TRUSTEES
ARMENIAN ST. MESROB
CHURCH

1326 State Street
Racine, Wisconsin
Telephone Prospect 380



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ՄԵՍՐՈՊ
ԵԿԵՂԵՑԻՈՑ
1326 Սթէյթ Սթրիթ
Րէյչսին, վիսգահսին
Հեռախօս Փրոսպեկթ 380

Մեյիս 14-1949

Պէտէ

ՄԸ. Արքայապետ Կարապետ
Գալթիանի Արքայապետ Կարապետ
Կարապետ

Պէտէ Արքայապետ Կարապետ

Կարապետ Գալթիանի 1948 Արքայապետ
Արքայապետ Կարապետ Կարապետ Կարապետ
Մի Արքայապետ Կարապետ Կարապետ

Կարապետ Արքայապետ Կարապետ Կարապետ
Արքայապետ Կարապետ Կարապետ Կարապետ
Արքայապետ Կարապետ Կարապետ Կարապետ

Արքայապետ
Կարապետ Արքայապետ
Արքայապետ Կարապետ
Արքայապետ Կարապետ

Արքայապետ
Կարապետ

Արքայապետ
Կարապետ

Փետրուար 16, 1949

Սեծայարգ
Տիար Կարապետ Խնճասուլեան
Ստեփանուպոլս, Հոգաբարձութեան
Ռէյսիոնի Համայնքին

Ստացած ենք Ձուներար 26 թուակիր Ձեր գրութիւնը որով կը տեղեկագրէիք մեր նախագահութեամբ կատարուած Եկեղեցւոյ Հոգաբարձական ընտրութիւնը եւ ներկայացնելով ամբողջական կազմը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Ստացանք նաեւ Փետրուար 14 թուակիր Ձեր Հաղորդագրութիւնը որով դրկած էիք Հոգաբարձութեան տարեկան հաշուետուութեան լման մէկ պատճէնը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու մեծ մասին վստահութիւնը իբրեւ Եկեղեցւոյ նախանձախնդիր եւ անձնուէր անդամներ, կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւնը ու պաշտօնները՝ հետեւեալ կարգով.-

- | | |
|----------------------------|---------------|
| Տեառք՝ Կարապետ Խնճասուլեան | Ատենապետ |
| Միսաք Վիտեան | Փոխ-Ատենապետ |
| Եղիա Թօփալեան | Ատենադպիր |
| Բենեամին Սելիտոնեան | Փոխ-Ատենադպիր |
| Սահակ Վարդանեան | Գանձապահ |
- Ի որհրդականք, Տեառք՝ Սահակ Ազիլիւլեան
Յակոբ Գրիգորեան

Կ'օրհնենք նորակազմ Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ վստահ ենք որ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյն պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար: Սաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ, կը ցանկանք որ անոնք բոլորեն արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Հայրական սիրոյ ողջունիւ
մնամք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

~~m~~ ~~Seupradia~~
Racine

Յուլիս 19, 1950

Մեծայարգ
Տիրար Մանուկ ձինկէօզեան
Ատենապետ պատ. հոգաբարձութեան
Րէյսինի համայնքին,

Աւելի քան չորս ամիս է որ Տիրացու Մանուկ Մմբատեան, Ձեր ազգայնոց հովիւը՝ եկած է եւ կ'ուսանի էվնսդընի մէջ, եւ միաժամանակ Շաբաթ եւ Կիրակի օրերը իր աստիճանին համաձայն կը հոգայ Ձեր համայնքին եկեղեցական գործերը:

Հետեւեալ երկու կէտերը այս առնչութեամբ հոգաբարձութեանդ ուշադրութեան կը յանձնենք:

Ա- Տիրացու Մանուկը արձակուրդի շրջանը պիտի անցնէ Րէյսինի մէջ: Այդ շրջանին կը յանձնարարենք Ձեզ որ իրեն համար գտնէք բնակութեան վայր մը որպէսզի աւելի արդիւնաւոր ըլլայ իր գործը համայնքիդ մէջ: Հարկ է որ մինչեւ իր ձեռնադրութիւնը Տիրացու Մանուկին յատկացնէք շաբաթական մը որպէսզի իր ապրուստի ծախքերը հոգայ: Մենք յետ այսու պիտի դրկենք միայն անոր ՈՒՄԱՆ ծախքը, իսկ իր ապրուստի ծախքը պէտք է հոգայ հոգաբարձութիւնդ՝ վճարելով իրեն գահացուցիչ թոշակ մը:

Բ- Յանձնարարած ենք Տիրացու Մանուկին որ՝ մտածէ հարկ եղած կարգադրութեանց մասին որպէսզի առաջին յարմար առթիւ կարենայ ձեռնադրուիլ եւ եկեղեցւոյդ մէջ հոգեւոր պաշտօնի ձեռնարկել: Աժմէն պէտք է որոշէ ամուսնացեալ կամ կուսակրօն քահանայ ըլլալու մասին:

Կը յանձնարարենք որ Տիրացու Մանուկին ապրուստը հոգալու համար իրեն վճարուելիք թոշակի եւ իր եկեղեցւոյդ մէջ ըրած կամ ընելիք գործերու մասին Ձեր խորհրդակցութեան սրդիւնքը մեզ իմացնէք առաջին առթիւ:


Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Racine

Հոկտեմբեր 31, 1950

Մեծայարգ
Տիար Մանուկ Ճինկեօզեան
Ատենապետ պատ. հոգաբարձութեան
Րէյսինի համայնքին.



Սիրելի Պր. Ճինկեօզեան.

Գառաջիկայ Նոյեմբեր 30-ին, Հինգշաբթի օր կեսօրէ
առաջ Նիւ Եորքէն ճամբայ կ'ընենք թիւ 59 գնացքով եւ Ուորթթ օր
կեսօրէն ետք ժամը 3:00-ին կը հասնիմ Շիկագոյի Լա-Սալ Սթրիթ-ի
կայարանը: Եթէ կրնաք կարգադրութիւն մ'ընել որ մէկը ինձ հան-
դիպի եւ միասին երթանք Րէյսին Լա Կ'ըլլայ:

Սիտն Սրբազանին կը գրեմ որ Խարտաւիրակ ըլլայ: Զեռնադրու-
թենէն անմիջապէս ետք Կիրակի իրիկուն Նորընծան կը մեկնի Տիթոյոյ
եւ կը մնայ հոն անցնելու համար իր քառասունքը:

Մանուկ Սարգսեազը ներքակ ձեռով թերթիկ մը մեծ խնամքով
տպել թող (այս գործը ցրուէք ժողովուրդը նաեւ հրաւիրէք նաեւ
տեղւոյդ ԱՐԵՒՆՆԵՐԸ եւ Եպիսկոպոսական եկեղեցիներու հովիւները,
/Բայց ոչ բողոքականները կամ եւ Կաթոլիկները/:

Տպագրուելիքին փոխուելիք տողերուն առջեւ նշան դրած եմ:

Թերթիկը շտպագրուած կ'ուզեմ փորձը տեսնել:
Զեռնադրութենէն անմիջապէս ետք Կիրակի օր կը սարքէք ճաշ-
կերոյթ մը: Զեռնադրութեան պատարագի ատեն Նորընծային ի նպաստ
կը պարզենք պնակ մը: Եկեղեցւոյ տարահին մէջ կամ սենեակի մը մէջ
կը յարմարենք անկողին մը որպէսզի ընծայացուն Կիրակի լուսնալիք
գիշերը եկեղեցիի մէջ քնանայ: Մեծագոյն նուիրատուն կամ ուրիշ յար-
մար անձ մը, հոգաբարձութեան որոշումով, պէտք է նշանակէք իբրեւ
խնամակալ, /որ ժողովուրդը սխալմամբ կ'ըսէր կը կոչէ/ Ընծայացուն
պէտք է ունենայ փիլոն մը պատրաստուած իրեն համար որ պարզ սեւ
նիւթէ շուրջա մըն է: Կը հրաւիրէք նաեւ Շիգակոյի, Եվընսթընի եւ
Ս.Միլվոօքիի հովիւները:

Առ այժմ այսքանս եթէ նոր հրահանգ մը ունենամ կը գրեմ: Մինչ
այդ՝ եթէ ուրիշ տեղեկութիւններ կ'ուզէք կրնաք ստանալ ինձմէ:

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Handwritten notes:
 4-6-50
 4-6-50
 4-6-50

**BOARD OF TRUSTEES
 ARMENIAN ST. MESROB
 CHURCH**

**1326 State Street
 Racine, Wisconsin
 Telephone Prospect 380**



**ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ՄԵՍՐՈՊ
 ԵԿԵՂԵՑԻՈՑ**

**1326 Սթէյթ Սթրիթ
 Րէյչին, Վիսգոնսին
 Հեռախօս Փրոսպեկթ 380**

Handwritten: Իմ. 29. 1950

Handwritten: Հինգ շաբաթ արժանաւոր Երաստան
 Գրասխան Կառնալոյ. Արեւմտեան Կոնգրէսի Երկր

Handwritten: Արեւմտեան Կոնգրէսի Կոմիտէի Երկր
 Կոմիտէի, Կոնգրէսի Կոմիտէի Կոմիտէի
 Արեւմտեան Կոնգրէսի Կոմիտէի Կոմիտէի
 Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի
 Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի
 Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի
 Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի Կոմիտէի

Handwritten: Եւրոպայի Կոնգրէսի
 Արեւմտեան Կոնգրէսի
 Կոմիտէի Կոմիտէի
 Կոմիտէի Կոմիտէի
 Կոմիտէի Կոմիտէի



Handwritten: Արեւմտեան Կոնգրէսի
 Կոմիտէի Կոմիտէի

Raine

Յունուար 15, 1951

Արժանաշնորհ
Տ.Արթուր ԲՀՆԵՅ. Սմբատեան
Նախագահ պատ. Հոգաբարձութեան
Րէյսինի Համայնքին,

Ստացած ենք ամսոյս 9 թուակիր Ձեր գրութիւնը որով
կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեամբ կատարուած է Համայնքի
Հոգաբարձական ընտրութիւնը եւ մերկայացնելով նոր կազմը կը խնդրէիք
վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով
ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու մեծ մասին վստահութիւնը,
իբրեւ եկեղեցւոյն նախանձախնդիր, անձնուէր եւ պատուական անդամներ,
կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւնն ու պաշտօնները
ըստ հետեւեալին.-

- | | |
|--------------------|--------------|
| Տեարք Միսաք Վիտեան | Ատենապետ |
| Մանուկ Ճինկէօզեան | Փոխ-Ատենապետ |
| Սարգիս Բէշիշեան | Ատենադպիր |
| Յովհաննէս Բէիշեան | Գանձապահ |
| Պօղոս Զոպանեան | Խորհրդական |
| Սահակ Ազկիւլեան | " |
| Գալուստ Միքայէլեան | " |

Կ'օրհնենք նորընտիր Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ
վստահ ենք որ անոնք պիտի աշխատին մեր Ս.Եկեղեցւոյն պայծառութեան
եւ Աստուծոյ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն
ի Տեառնէ, կը ցանկանք որ անոնք բոլորեն արդիւնաւոր գործունէութեան
ըջան մը:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամբրիկայի

Armenian St. Mesrob Church



Սուրբ Մեսրոպ Հյո, Եկցի:
Ռէյսին, Ռիսքանսըն:
Յունուար 9, 1952

Handwritten notes:
Մարտի 14, 1952
Ս. Սեմպադիան
Ս. Սեմպադիան

Հոգ Եւր Թորգոմ Վրդ Մանուկեան
Տեղակալ Առաջնորդութեան
Հիւս, Ամեր, Հյո, Եկց-ւոյ:
Նիւ-Եորք, Նիւ - Նիւ ԵՕՐԲ:

Հոգեշնորհ հայր,

Ռէյսինի Սուրբ Մեսրոպ Հայաստանեայց եկեղեցւոյ տարեվերջի ընտրական Անդամական Ժողովը գումարուեցաւ 1951 տարուոյ Դեկտեմբերի 16-ին, մեր Նախագահութեամբ: Հոգաբարձութեանս 7-ը անդամներէն վեցին պաշտօնի շրջանին վախճանման, եւ մէկի հրաժարման, պատճառով բոլորովին նոր կազմ մը ընտրելու ձեռնարկը տուաւ հետեւեալ արդիւնքը,

- Պրն, Միսաք Վիտեան, Ատենապետ:
- Պրն, Մանուկ ձինկօզեան, Փոխ-Ատենապետ:
- Պրն, Սարգիս Բէչիչեան, Ատենադպիր:
- Պրն, Յովհաննէս Բէչիչեան, Գանձապահ:
- Պրն, Պօղոս Զօպանեան, Խորհրդական:
- Պրն, Մահակ Ազկիւլեան, Խորհրդական:
- Պրն, Գալուստ Միքայէլեան, Խորհրդական:

Կը մատուցանենք Ձերդ Հոգեշնորհութեան ի վաւերացումս:

Աղօթակից,

Handwritten signature: Արտոն Սեմպադիան

Հովիւ: Ս, Մեսրոպ Հյո, Եկցի:
Ռէյսին: Ռիսքանսըն:

* ՂԵՂՈՒՅՈՒՎԱՍ * ՂԱՌՅԳՍ

ԿՑԳՆԳԿԳ ՅՏԵՂԳՂՏՈՒՅՈՒՆ ԽՍՍՈՂՈ ՅՍԿՍՈ

ՍԿԵՂԿԳՆԳՏ ԿԽՄՆՍՔ ԳՈԿՈՒՊ ԳՈԿՈՍՏԳՆ ԳՈԿԳՍՏ

Armenian St. Mesrob Church



Յունուար 7, 1952

Հոգ, Տ, Թորգոմ Վրդ, Մանուկեան

Տեղակալ Առաջնորդութեան

Հիւս, Ամեր, Հյց, Եկեղեցւոյ:

Նիւ-Եօրթ: Նիւ-Եօրթ:

Հոգեշնորհ Հայր,

Ռէյսիսի Սուրբ Մեսրոպ Հայաստանեայց Եկեղեցւոյ տարեկան
Ընտրական Անդամական Ժողովը գումարուեցաւ Դեկտեմբերի 16-ին, 1951-ին, եկե-
ղեցւոյս 1951 տարեշրջանի իրենց տուրքերը վճառած 130 անդամներէն 60-ի ներ-
կայութեամբը: Կը նախագահէր Եկեղեցւոյս հովիւ Արժանաշնորհ Տէր Արթուն Բհն,
Սմբատեան, որ Տէրունական աղօթքով բանալով ժողովը զայն յաջտարարեց օրինա-
ւոր:

Ապա կատարուեցաւ ներկաներու ստուգումը, որմէ ամիջապէս վերջը 1951
տարուոյ Հոգաբարձութեանս ատենապետ, Պրն, Միսաք Վիտեան կարդաց իր տեղեկա-
գիրը: Յաւարտմանն ասոր, Տէր Արթուն Երէց տուաւ միամեայ իր գործունէու-
թեան տեղեկագիրը: Ժողովը գոհունակութեամբ ընդունեց զոյգ տեղեկագիրները,
ու անցաւ արդէն դասաւորուած եւ ժողովրդան ղրկուած օրակարգի գործադրու-
թեան, որ էր հետեւեալը,

1) Ընտրութիւն օրուայ ատենապետի եւ ատենադպրի:

2) Տեղեկագիր Տան Գնման Յանձնախումբի:

3) Տեղեկագիր Երեսփոխանական Ժողովի:

5) Ընտրութիւն Հոգաբարձութեան դադարեալ անդամոց տեղ:

4) Տեղեկագիր Բննիչ Յանձնախումբի:

6) Ծխական Վարժարանի հարց:

7) Համայնքային ընթացիկ հարցեր:

Ա- Ժողովը փակ քուէարկութեամբ օրուայ ատենապետութեան ընտրեց Պրն, Յովհաննէս Բէիշեանը, իսկ ատենադպրութեան ընտրեց Պրն, Յարութիւն Մարտիրոս: Յիշեալները յետ այդու վարեցին ժողովը օրինաւորութեան մէջ:

Բ- Պրն, Ատենապետի հրաւերով Տան գնման յանձնախումբի անդամ Պարոն Բարձրղիմէոս Ջօրտիկեան խօսելով յանձնախումբի կողմէ, իմացուց ժողովին թէ հակառակ աջալուրջ եւ յարատեւ փնտրտութեան, տակաւին կարելի չէ եղած յարմարագոյն տան մը գնումը Եկեղեցւոյս հովուին բնակութեան համար:

Գ- 1951 տարուոյ Ուստրի մէջ գումարուած Երեսփոխանական ժողովի Տեղեկագիրը մատուցուեցաւ Պարոն Թորոս Մատաղճեանի, Համայնքիս երեսփոխանի, կողմէ: Ընդունուեցաւ գնահատանքով:

Գ* Համայնքիս նախապատրաստական Ծխական ժողովէն Սեպտեմբերի մէջ ընտրուած Ընտրողական Յանձնախումբը արդէն պատշաճ ունենալով 14 անուններու երկպատիկ ցանկ մը դադարեալ հոգաբարձուներու ընտրութեան համար, զայն մատոյց ծխական ժողովին որ հետեւեալ անձերը ընտրեց 1952 տարեշրջանի իբրեւ հոգաբարձուներ,

- 2 տարի ---- Պրն, Միսաք Վիտեան----- 34 քուէ:
- „ ---- Պրն, Յովհաննէս Բէիշեան ----- 31 քուէ:
- „ ---- Պրն, Պօղոս Ջօպանեան ----- 22 քուէ:
- „ ---- Պրն, Սահակ Ազկիւլեան ----- 25 քուէ:
- 1 տարի ---- Պրն, Մանուկ Ճինկօզեան ----- 20 քուէ:
- „ ---- Պրն, Սարգիս Բէշիշեան ----- 25 քուէ:

Դ- Զննիչ Յանձնախումբի տեղեկագիրը կարդաց Պրն, Յարութիւն մարտիկան: Սոյն տեղեկագիրը կ'ընդգրկէր 1951 տարուայ Յուանուարէն մինչեւ նոյեմբեր ամիսները: Արդիւնք,

ՄՈՒՏՔ	8208	տոլար	եւ	12	սէնթ,
ԵՆՔ	7792	տոլար	եւ	01	սէնթ,
ՊԱՏՐԱՍ	416	տոլար	եւ	11	սէնթ:

Ընդհանուր մուտքի գումարին մէջ է նաեւ 1950 տարուայ հոգաբարձութենէն 1951 տարուայ հոգաբարձութեան փոխանձուած 500 տոլարի պատրաստի գումարը:

Զ- Նկատի ունենալով 1951 տարուայ մէջ գործող ծխական վարժարանի համար ընտրուած Դպրոցի Մարմինին ոչ շատ փայլուն գործունէութեան պատկերը, Անդամական ժողովը որոշեց զայն յանձնել հովուին եւ հոգաբարձութեան լաւագոյն կարգադրութեան 1952 տարուայ համար:

Է- Աչքարու համայնքային հարցեր չի բերուեցան ժողովին:

Ժողովս, որ Սկսած էր ձիշտ ժամը 3-ին, չունենալով ուրիշ հարցեր, ժողովականներու առջարկով եւ քուէարկութեամբ փակուեցաւ ժամը 6-15-ին, հովուին փակման աղօթքով:

Ատենապետ,

Հովնաթովմ. Բեկիջեան

Հովիւ

Վարդա Քալ. Ամբոջ
ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ՀՅՑ, ԵԿԵՂԵՑԻՈՅ 1951-ի
ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ:

Ատենադպիր,

~~*Հովնաթովմ. Բեկիջեան*~~
Յարութիւն մարտիկան

Pacine

Յուլուար 16, 1951

Արժանաշնորհ
Տ. Արթուր ՔՀՆյ. Մեքսիկոյ
Նախագահ Պատ. Հոգաբարձութեան
Ռէյսինի Համայնքին.

Ստացած ենք Քեկտ. 25 թուակիր Ձեր գրութիւնը, որով կը տեղեկացնէիք
ձե՛ք Նախագահութեամբ, կատարուած է Համայնքիդ Հոգաբարձական ըն-
տրութիւնը, եւ ներկայացնելով ամբողջական նոր կազմը, կը խնդրէիք
վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ
ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն, իբրեւ եկեղեց-
ւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պատուական անդամներ, կը վաւերա-
ցընենք եւ կը հաստատենք ընտրութիւնն ու պաշտօնները հետեւեալ
կարգով.-


- | | | |
|-------|-----------------|---------------|
| Տեալք | Միսկ Վիտիեան | Ատենապետ |
| | Բոլ Մինասեան | Փոխ-Ատենապետ |
| | Սէմ Զարբիէլեան | Ատենագլխի |
| | Սէմ Պօռանեան | Փոխ-Ատենագլխի |
| | ՃօզէՏ Ծահնիեան | Գանձապետ |
| | Հէրի Ճինկոզեան | Խորհրդական |
| | Արմէն Մազմանեան | |

Կ'օրհնենք նորակազմ Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ վստահ ենք
որ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյն պայծառութեան եւ Աստուծոյ
փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ, կը
ցանկանք որ բոլորքն արգիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Ողջունիւ սիրոյ
Մնամք ազօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՑ ԵԿԵՂԵՑԻ



Armenian Apostolic St. Mesrob Church
1326 State Street
Racine, - Wisconsin

*Yan. V. M. ...
29 Nov. 1950 ...*

December 25, 1950

Diocese of the Armenian Church
630 Second Avenue
New York 16, New York

Your Grace Bishop Tiran

The annual meeting of our congregation was held Sunday, December 17, in the afternoon. John Keishian was acting chairman of the day and Paul Chobanian, the recording secretary, with Rev. Megherian as president.

The following men make up the Board of Trustees for the year 1951 of St. Mesrob Church.

- Misag Vidian *M. Vidian* Chairman
- Paul Minasian Co-chairman
- Sam Kaprelian Secretary
- Sam Boranian Asst. Secretary
- Joseph Yahnian *J. Yahnian* Treasurer
- Harry Gengozian *H. Gengozian* Loosaran *per*
- Armen Mazmanian Advisor "

As to the final financial report, it will be submitted to the new trustees at the end of this month.

With your Grace's approval and blessing, this board will carry on its work as soon as your acknowledgment is received.

Yours Respectfully,

R. Vartan Megherian

Rev. Vartan Megherian

Acting Chairman

John Keishian
John Keishian

Acting Secretary

Paul Chobanian
Paul Chobanian

sk

S. Y. ...

1950 ընթացքում շրջանի բնակիչ Ա. Բեքարյան
 եկեղեցույն համայնքապետին շնորհաբանությամբ
 1950 շահույթ 22 64 ՏՊԵՆ ԳՆ/Պ. 31. ~ ~ ~

1.	Անդամներու քիչ Երես	\$ 2217.00
2.	Անդամներու և անդամներու	2158.59
3.	Եկեղեցույն պահպան	1283.55
4.	Ա. Զարգիս անդամներու	322.00
5.	1949 ընթացքում շրջանի ավանդական Երեսի արևելք	300.00
6.	Երեսի անդամներու և անդամներու	246.00
7.	Կապիտալ	234.76
8.	Եկեղեցույն արևելք	109.54
9.	Անդամներու և անդամներու Երեսի և անդամներու	88.40
10.	Հավանական Երեսի	86.35
11.	Արևելք	79.50
12.	Բարեկարգի շնորհաբանությամբ անդամներու	330.02
13.	Բարեկարգի և անդամներու և անդամներու	33.98
	Անդամներու Երես	<u>\$ 7489.69</u>
	Անդամներու և անդամներու	6703.78
1950.	Գույքի և անդամներու և անդամներու	<u>\$ 785.91</u>

11 Յուլի 1951 ՎՄԵ.Ի.



1950 ամսական շահերի միջակայքի վր. արժեքի հիշարժան
 հիշարժան շահերի միջակայքի վր. 1950 թվականի 22-ի մինչև 23-ի

1.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 1262.00	1262.00
2.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 968.11	968.11
3.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 777.50	777.50
4.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 517.79	517.79
5.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 466.00	466.00
6.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 360.00	360.00
7.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 300.00	300.00
8.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 255.00	255.00
9.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 172.50	172.50
10.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 127.59	127.59
11.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 115.00	115.00
12.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 106.30	106.30
13.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 117.37	117.37
14.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 111.00	111.00
15.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 94.20	94.20
16.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 89.07	89.07
17.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 80.00	80.00
18.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 73.37	73.37
19.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 69.29	69.29
20.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 68.93	68.93
21.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 70.50	70.50
22.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 105.35	105.35
23.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 65.34	65.34
24.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 69.00	69.00
25.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 65.00	65.00
26.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 50.00	50.00
27.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 45.57	45.57
28.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 35.00	35.00
29.	արժեքի հիշարժանի վր. արժեքի հիշարժանի միջակայքի վր. 37.00	37.00
	արժեքի հիշարժանի վր. 6703.78	6703.78

Racine

Օգոստոս 10, 1951

Մեծայարգ
Տիար Միսակ Վիտիեան
Ատենապետ Հոգաբարձութեան Ս.Մեսրոպ Եկեղեցւոյ
Րէյսինի Համայնքին

Սիրելի Պր. Վիտիեան,

Առաջնորդարանիս Կեդրոնական Վարչութեան նախանցեալ նիստին մէջ նկատի առնելով մեր թեմի կարգ մը հովիւներու տնտեսական կացութիւնը՝ տեսանք թէ դժգոհացուցիչ եւ անարդար երեւոյթ մը կը ներկայացնէ ան:

Պէտք է ի մտի ունենալ որ եկեղեցւոյ հովիւ մը Համեստ բայց սակայն ըստ բաւականի Հանգիստ կացութիւն մը պէտք է ունենայ, որպէսզի իր գործը կարենայ կատարել առանց դրամական մտահոգութեանց եւ եկեղեցւոյ ու իր ժողովուրդին արժանապատուութիւնը կարենայ բարձր պահել:

Մեր եկեղեցիներէն ոմանք երիցատուն չունին եւ այդ եկեղեցիներու հովիւները իրենց բնակարանի ծախքը իրենք կը հոգան: Ձեր եկեղեցին մին է անոնցմէ: Եւ հակառակ անոր որ երիցատուն չունիք, ու հակառակ անոր որ Համեմատաբար փոքր ծուխ մ'ըլլալով՝ Ձեր հովիւին տրուած նուէրներն ու ժամուցները շատ աննշան գումար մը կը կազմեն, Ձեր հովիւին թոշակը մեր կարգ մը երիցատուն ունեցող հովիւներու թոշակէն ալ պակաս է:

Այս կացութիւնը պէտք է որ կերպով մը դարմանուի Հոգաբարձութեանը կողմէ, ծանօթ ըլլալով պատուարժան անդամներուդ՝ որ գիներու բարձրացումը որքան դժուարացուցած է ապրուստը:

Ուստի կարելոր է որ Հոգաբարձութիւնդ առաջին առթիւ Ձեր հովիւի բնակարանի վարձքին հաշւոյն շարաթական որոշ ու Ձեր կարծիքով պատշաճ գումար մը յատկացնէ:

Ասկէ զատ Հոգաբարձութիւնդ անդամական ժողովի որոշումով պէտք է խորհի նաեւ խնդրոյն հիմնական լուծման մասին, եւ սկսի եկեղեցւոյ մօտ երիցատուն մը գնելու համար միջոցներ ձեռք առնել, ոչ միայն հովիւի բնակարանի ծախքը թեթեւցնելու՝ այլ նաեւ եկեղեցւոյ գործերուն աւելի եւ արդիւնաւորութիւնը ապահովելու համար:

Սիրելի Պր. Վիտիեան, իրաւ է որ Ձեր հովիւը տակաւին կը շարունակէ իր ուսանողութիւնը եւ շարթուան մէջ կը մնայ էվընսդըն ուսմանց ընթացքին: Բայց պէտք է գիտնաք թէ ան ստիպուած է այդ բանը ընել՝ որպէսզի ան իր ուսումն աւարտէ՝ եւ այդ կերպով եկեղեցւոյն աւելի եւս

օգտակար ըլլայ, եւ միաժամանակ իր Ամերիկա մնացուն քնակութեան գործն
ալ դիւրացնէ: Այնք է ուրախ ըլլա՞ծ որ Ձեր հովիւը իր ուսումը կատարելա-
գործելու համար ջանք չի խնայեր: Եւ պէտք չէ որ Ձեր հովիւը ապրուստի
դժուարութիւն զգայ:

Կը յանձնարարենք որ վերոյիշեալ խնդրոյն մասին առաջին
առթիւ միջոց մը նորհի՞ք եւ արդիւնքը տեղեկացնէ՞ք մեզ:

Հայրական սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ
Մնամք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

3552 Bryant Ave, So,
Minneapolis, Minn

Հոկտեմբեր 11, 1951

Մեծայարգ
Տիար Անդարանիկ Գավուզեան
Մինիաքոլիս, Մինն.

Սիրելի Պր. Գավուզեան,

Արժ. Տ. Արթուր Բահանան մեզի հաղորդեց Մինիաքոլիսի մէջ գտնուող փոքր Հայ համայնքի եւ անոր անդամներուն եկեղեցասիրական եւ ազգասիրական զգացումներու մասին: Ուստի շատ ուրախ եղանք լսելով՝ որ փափաք յայտնած էք հոգեւորականի մը այցելութիւնը ընդունիլ եւ Ս. Պատարագի մատուցմամբ եւ համայնական հախաթոյթով արծարծել Ձեր քրիստոնէական եւ ազգային զգացումները եւ ջանք թափել հաւատարիմ մնալու մեր ազգային եւ կրօնական աւանդութեանց:

Այս առթիւ մեր խնդակցութիւնը կը յայտնենք Ձեր միջոցաւ Միննէաքոլիսի մեր Հայ հոգեւոր որդւոց եւ կը յանձնարարենք սիրով՝ որ տեղւոյդ վրայ Յանձնախումբ մը կազմելով՝ ջանաք մեր եկեղեցւոյ եւ ազգին զաւակները կապուած պահել իրարու եւ ազգին ամբողջութեան, առ այդ յարաբերութիւն հաստատելով Ռէյսինի մեր ծուխին հետ:

Արժ. Տ. Արթուր Բահանային ալ յանձնարարած ենք որ կարելի եղածին չափ հետաքրքրուի տեղւոյդ համայնական գործերով եւ հարկ եղած ուղղութիւնն ու օժանդակութիւնը տայ Ձեզ:

Կ'ողջունենք քաղաքիդ փոքրաթիւ հայութեան ամէն մէկ անդամը, եւ կը մաղթենք որ մեր հայրերուն Աստուածը անոնցմէ ամէն մէկուն սրտին մէջ վառ պահէ անոնց նախնեաց մեծութեան եւ հաւատքին գիտակցութիւնը եւ իր ամենազօրաջը միշտ հովանի ընէ անոնց վրայ:

Սպասելով լսել Միննէաքոլիսի մեր փոքրաթիւ սիրելեաց աստուածահաճոյ եւ ազգօգուտ ձեռնարկներուն մասին՝

Մնամք հայրական շերմ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ՝ աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Racine

Ապրիլ 16, 1952

Արժանաշնորհ
Տ. Արթուր ԲՀՆԿ. Սմբատեան
Նախագահ Հոգաբարձութեան
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Րէյսինի

Սիրելի Տէր Արթուր,

Հոգաբարձութիւնդ տակաւին ընթացք չէ տուած մեր հրահանգին՝ Եկեղեցւոյդ կալուածաթուղթերուն օրինակը կամ բնագիրը Առաջնորդարան ղրկելու, որպէսզի քայլեր առնուին զանոնք փոխանցելու Առաջնորդարանի անունին:

Պէտք է շատ որոշ կերպով ամէն ոք գիտնայ առանց ոեւէ տարակուսանքի՝ որ Երեսփոխանական ժողովի կողմէ վճռապէս որոշուած եւ Վեհափառ Հայրապետին կողմէ վաւերացուած եւ գործադրութեան հրահանգ տրուած է որ բոլոր ծխական կալուածները փոխանցուին Առաջնորդարանին: Հետեւաբար Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետի իրաւասութիւնը ճանչցող եւ Երեսփոխանական ժողովի մաս կազմող ամէն ծուխ առանց այլեւայլի պարտաւոր է գործադրել մեր թեմական կանոնագրութեան այդ յօդուածը: /Տես կանոնագրութեան Յօդ. 73 - 80/ Պարզ է որ այն ծուխերը որ կ'անսաստեն այդ կանոններուն ինքզինք Հայաստանեայց Եկեղեցիէն դուրս հանած եւ անջատականներու եւ հերձուածողներու կարգը դասած կ'ըլլան:

Ոչ հոգաբարձութիւնը եւ ոչ ալ անդամական ժողովը այս մասին ոեւէ առարկութիւն ընելու ոեւէ իրաւունք չունի: Շիգակոյի Եկեղեցին արդէն Առաջնորդարանի անունին անցած է եւ ոեւէ դժուարութիւն եւ անպատեհութիւն չէ պատահած եւ ոչ ալ կրնայ պատահիլ:

Ուստի փութով հարկ է որ այս խնդիրը կարգադրուի եւ Դուք առ այդ հարկ եղած քայլերը պէտք է առնէք:

Հայրական ջերմ սիրոյ ողջունելի
Մնամք արօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Armenian St. Mesrob Church



Մարտ 31, 1952

Հոգ Եւր Թորգոմ Վրո Մանուկեան
Տեղ Առաջ Հիւս Ամերիկայի
Ի Նիւ-Եօրք, Նիւ-ԵՕՐԱ:

Սիրելի Հայր Թորգոմ,

Ձեր ստորագրութիւնը կրող Թիւ 51 շրջաբերականը եւ որ ընդ նմայն ստացած եմ:

Այս առթիւ կուզէի ռսել, պատասխանելով ձեր հարցերուն եւ հրահանգներուն,

- ա- Կր ցաւիմ թէ ցարդ տակաւին մեր համայնքի բաժին հանուած պիւտ-ճէի տարետուրքը (մասնաւոր) չէ ուղղարկուած հակառակ այն իրողութեան թէ սկիզբէն հետամուտ եղած եմ միշտ որ Առաջնորդարանի բոլոր տուրքերը լիովին վճարուին: Սոյն կէտը կը յանձնեմ Հոգաբարձութեանս կրկին ուշադրութեան, մեր յաջորդ ժողովին իսկ:
- բ) Հայաստանեայց Եկեղեցւոյ առնչութեամբ ձեր հրահանգը նոր բաժան նորոններ գտնելու կ'աշխատիմ կատարել ի կարողութեանս:
- գ) Գալով Եկեղեցապատկան կալուածներու Տիտերու, պէտք է ըսեմ թէ հրահանգի հասնելէն ամիջապէս վերջը դրրի հոգաբարձութեան: Հակառակ բացատրութեանցս եւ նախազգացումիս - որովհետեւ լաւ գիտէի տալիք արդիւնքը - որոշեցին տանիլ Անդամական ժողովի: Արդիւնք: Ամենատեղ կերպով մերժում ընելու ունէ բան այդ մասին: Պարզ խօսքով: Կը մերժեն կատարել Երեսփոխանական ժողովի որոշումը: Տիտերը կը մնան Պանքայի մէջ, Պահեստի Յանձնախումբի մը անուամբ: Այս մասին խորհելու գործը կը ձգեմ ձեզի, սպասելով որ գրէք ինձի ընելիքս:

Այսքան այդ բոլորի մասին:

Աղօթակից,

Artoon Sempadian

Armenian St. Mesrob Church

Racine



Մայիս 16, 1952

Գեր Տէր Տիրան Արքեպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
ՆԻՒ-ԵՕՐԱ:

Սիրելի Սրբազան Հայր,

Ասով կը մատուցանեմ Ձերդ Սրբազնութեան իմ հրատարականս Ռէյսինի Սուրբ Մեսրոպ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հովուական պաշտօնէն: Եւ որպէսզի չի տարուիք խորհելու թէ վայրկեանի մը քըմայքի արդիւնք կրնայ ըլլալ ասիկա, եւ կամ անհեռատես դատողութեան մը որոշում, պիտի սիրէի աւելցնել թէ շատ կարելոր եւ լուրջ պատճառներ ~~կ'~~ կ'ստիպեն զիս ընելու այսպէս: Ատոնցմէ պիտի թուեմ միմիայն միջանին, որոնց ծանրութիւնը եւ կարելորութիւնը վստահ եմ թէ Ձերդ Սրբազնութիւնը հարկ եղած լրջութեամբը նկատի պիտի առնէ: Այսպէս,

1- Դպրոցիս խնդիրը: Անշուշտ Ձերդ Սրբազնութիւնը պիտի համաձայնի ինծի հետ եթէ ըսեմ թէ լաւագոյն կրթութեան մը առիթը չեմ ուզեր ըսպանել որքան ատեն որ ուշ չէ տակաւին: Մօտաւորապէս տարուայ մը փոքր-ձառութիւնը հիմա ինծի յստակ կ'ընէ թէ անկարելի է ինծի համար բնակիլ մէկ քաղաքի մէջ եւ ընել հովուական գործ, մինչ՝ դպրոցս կը գտնուի ինծմէ 70 մղոն հեռու: Ժամանակի, փոխադրութեան, եւ Ֆիզիքական դժուարութիւնները ի վերջոյ զիս համոզած են այս կերպ ուսանողութեան անգործականութեանը, մինչ՝ երթալով աւելի կը շատնայ մէջս յուսահարութիւնը եւ ցաւը ուսանողութիւնս կ'իսաւարտ ձգել ստիպուելուս: Ի վերջոյ, ինչպէս արդէն Ձերդ Սրբազնութիւնը ըսած է, իմ ներկայ կարելոր եւ ստիպողական պարտականութիւններէն մէկը՝ աւելի եւս լաւ պատրաստուիլն է՝ աւելի արդիւնաւոր ապագայ գործունէութեան համար: Եւ ասիկա ընել այժմ չեմ կրնար վերը յիշեալ եւ այլ կարելոր պատճառներու իբրեւ հեռեւանք: Կը մտածեմ թէ ի վերջոյ իմ իրաւունքս ալ է ուսանողութիւնս ընել նախ:

2- Ընտանեկան պարագաներ: Ձեմ խորհիր թէ այս կէտը հարկ եղած իր ծանրութեամբը պիտի գայ Ձերդ Սրբազնութեան՝ քանի որ ձեր փորձառութեան պատմութիւնէն դուրս նորութիւն մըն է: Սակայն հարկ է որ ըսեմ թէ այս պարագան իր շատ մը արդիւնքները կ'առնէ սա իրողութիւնէն՝ թէ ես ամուսնացած եմ մէկու մը հետ որու ծննդավայրն է այս քաղաքը եւ ուր կը բնակին երէցկնոջ հայրն ու մայրը: Այդ արդիւնքները շլատիջ եւ վնասակար եղած են ցարդ ոչ միայն իմ գործիս արդիւնաւորութեան՝ այլ եւ իմ երջանիկ ընտանեկան կեանք մը ունենալուս դէմ ամենավնասակար եւ կարելոր խոշնդոտները հանդիսացած են: Եւ չեմ խորհիր թէ ինծի համար յարմարագոյն համայնքն է այս տեղը ապրելու եւ գործելու համար: Հակառակը՝ դրապէս ճիշտ է, եւ կը խնդրեմ որ հասկնաք եւ հաւատաք ասոր, Սիրելի Սրբազան Հայր:

Armenian St. Mesrob Church



(շար,)

3- Արդիւնք՝ երկրորդ պատճառի: Ասոր արդէն ակնարկեցի վերեւ, եւ որ սա է՝ իր պարզ ձեւին մէջ: Ձեմ ուզեր հովուական գործ կատարել համայնքի մը մէջ ուր ընտանեկան եւ այլ անկիւններէ եկող կապանքներ կան շուրջս: Ի վերջոյ իմ պարտականութիւնս եւ մանաւանդ իրաւունքս է ընել իմ պաշտօնիս մէջ ինչ որ իմ կարողութիւններս կը ներեն, եւ ասիկա՝ թէ իմ անունիս եւ թէ ալ Հայաստանեայց Եկեղեցւոյ համար: Կը խնդրեմ որ նկատի առնէք այս կէտը եւ ինծի տաք առանց հաշիւի եւ կապանքներու ծառայելու իմ իրաւունքս, թէ ինծի եւ թէ ալ ծառայած եկեղեցւոյս համար:

Սրբազան Հայր, կրկնապէս կը խնդրեմ ձեզմէ որ նկատի առնէք վերեւ իմ թուած շատ կարեւոր պատճառներս այս հրաժարականը մատուցանելու իբրեւ դրդապատճառ: Լաւագոյննէ որ զիս դրկէք հոն ուր յարմարագոյն կը գտնէք թէ ինծի եւ թէ ալ ձեզի անտեղի գլխու ցաւեր եւ դժուարութիւններ խնայելու համար ապագային: Ձեր պատասխանը պիտի ակնկալեմ անյամբեր եւ կը յուսամ թէ ատիկա շատ երկար չի պիտի առնէ ինծի հասնելու: Ամառը արդէն շատ մօտ է եւ երէցկնոջ եւ փոքրիկին համար յարմարագոյնն է փոխադրուիլ տաք օրերուն: Մինչ այդ՝ անշուշտ կը շարունակեմ կատարել իմ պարտականութիւններս լիով լի:

Մատչելով ի Համբոյր
Ձեր Սուրբ Աջոյն,

Արտուն Տէր. Ամբաստան

Արտուն Տէր. Ամբաստան

Հովիւ: Ս, Մեսրոպ Հյոց, Եկղցի,
Ռէյսին: Ռւիսթանսըն:

Օգոստոս 27, 1954

Արժանաշնորհ
Տ. Արթուր ԲՀՆՅ. Սմբատեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյն
Ռէյսին

Սիրելի Տէր Արթուր,

Դեկտեմբեր 8, 1953, թուակիր նամակով Ձեզ հաղորդուած էր թէ Ձեր ժուկին թեմական պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը աւարտած է եւ կը հրահանգուէր ընտրել ժուկիդ համար նոր պատգամաւորներ: Այդ մասին տակաւին Ձեզմէ որ եւ է տեղեկութիւն չէ ստացուած:

